

ՄՇԱԿ

Տարեկան դիմել 10 րուբլ, կես տարեկան 6 րուբլ:

Ուսանողի համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանագրություններ:

Օտարադատարանի գրքերում են ուղղակի:

Тифлис. Редакция «Мшак»

Նմանագրությունը բաց է առևտուրի 10—2 ժամ

(Բացի կիրակի և տոն օրերից):

Ցայտարարությունը բնորոշվում է ամեն լիզուով:

Հայտարարությունների համար գնալովում են:

խրատական 2 կոպեկով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՄՇԱԿ

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ 1882 ԹԻՒՆ

(Տ Ա Ս Ն Ե Ւ Մ Է Կ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամայով:
ՊՐՕԳՐԱՄԱ. I. Տեղեկական կարգադրություններ, II. Առաջնորդող յոգևածներ, III. Ներքին տեսություններ, IV. Արտաքին տեսություններ, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիետոն կամ Բանասիրական, VIII. Ցայտարարություններ:
ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՍՏԱՆՈՐԳՈՒՄԸ, 10 րուբլ է, կես տարեկան 6 ր., իւրաքանչիւր ամսին 1 րուբլ: Հատով համարները 5 կոպեկով:
Գրվել կարելի է խմբագրությունում մէջ հետեւեալ հասցեով. Тифлис, редакция «Мшак».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երուսաղէմի վանքը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բագուից. Նամակ Կիւմիյի. Նամակ Շամախուց.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ամերիկայի Գերմանիայի Միւլլեր Կ. Պոլսից. Արտաքին լուրեր. —ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆՏԱՆՈՐԳՈՒՄԸ. Կալուսածական հարցը:

ԵՐՈՍՏԱՆԵՍԻ ՎԱՆՔԸ

Հայոց հասարակութիւնը զարմացմամբ իմացաւ որ Երուսաղէմի հայոց վանքը բռնի

ԲԱՆՏԱՆՈՐԳՈՒՄԸ

ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ՀԱՐՑ

Յայտնի է, որ Կովկասում գիւղատնտեսական նպատակի համար վարելու և ուրիշ արդիւնաբերութեան յարմար հողեր շատ կան, բայց մի և նոյն ժամանակ յայտնի է, որ մեր գիւղացին չարչարվում է հողի պակասութեանց:

Հողաբաժնիներ պակասութեան լուրերը կարելի է կարգաւ ամեն մի քաղաքում, իսկ դուր հետեւեալը լինում է այն, որ գիւղացին ստիպւած է ամենամեծ զոհարելութիւններ անել հողեր վարելու իրաւունքը ձեռք բերելու համար. և այդ պակասութիւնը նկատուած է ոչ թէ միայն մի տեղ, այլ ամբողջ Գանձակի, Նրեանի, Թիֆլիսի և Բագուի նահանգներում, և ոչ թէ միայն կալուածատիրոջ գիւղացուց մէջ, այլ և արքունական գիւղացուց մէջ:

Մինչև վերջի ժամանակները արքունական դատարկ հողեր շատ կային և առանձին ուշադրութիւն չէր դարձնուած, թէ ինչքան են գիւղացիք հողեր վարում, բայց նորերումս, մի կողմից զանազան ազգեր Կովկաս տեղափոխվելով, բռնում են տաղարկ հողերը և միւս կողմից արքունական կալվածները կառավարելները խտուրթեմբով վարելով իրանց պաշտօնները, չեն թողնում տալիս գիւղացիներին վարել աւելի քան հասնում է նորանց:

Իսկ տեղեկութիւնը գիւղացուն հողը տալիս է ծխի հաշուով.—30 դեկտեմբեր տալիս տեղից կամ 15 դեկտեմբեր ճրովի տեղից, չը զանազանելով ծուխը՝ ընտանիքից: Բայց մեր գիւղացին ապրելով պապական աւանդութեամբ, չէ սիրում բաժանել իր ընտանիքը, ինչպէս նկատել են երեսները: Եւրոպացի ճանապարհորդները, և շատ անգամ կարելի է նկատել մի հայ գերդաստան լաղկացած 30—40 հոգուց, և ի հարկէ այդպիսի գերդաստանի հասար 30 կամ 15 դեկտեմբեր տեղ շատ քիչ է: Այդպիսի գերդաստանն էլ է մի

300,000 րուբլ պարտք: Ի՞նչիցն է գոյացիլ այդ ահաբեկ պարտքը, կը հարցնի անպատճառ հայերից իւրաքանչիւրը:

Գորան պատասխանել շատ դժուար է: Միայն կը բերենք այստեղ մի իրողութիւն հայոց այդ վանքի ամենամօտ պատմութիւնից, մի իրողութիւն, որ հաստատում են հայոց նոր պատմագիրները:

Յիսուս տարի սրանից առաջ Երուսաղէմի վանքը նոյնպէս ահաբեկ պարտքեր ունէր: Այդ ժամանակ Կ. Պոլսի պատրիարքը

ծուխ ճանաչվում և մի մալականի ընտանիք էլ է մի ծուխ ճանաչվում, որը բաղկացած է 2—3—4 հոգուց և միաքանակ հող է արվում այդպիսի զանազան քանակութիւնից բաղկացած ծխերին, որովհետեւ, այդ երկու ծխերիցն էլ մի և նոյն հարկն է աւանդում:

Բայց չը նայելով և այդ հանգամանքին, կարելի է ասել, որ արքունական գիւղացու հողաբաժնիք էլի մեծ է քան կալուածատիրոջ գիւղացունը, որովհետեւ այս վերջինները ինչքան էլ որ բազմաթիւ են, ինչքան էլ որ կրեն հողի պակասութիւն, էլի չեն կարող նոր հող ստանալ կալվածատէրից, բայց արքունական գիւղացին այդպիսի դէպքերում կարող է դիմել նահանգապետին, որը ըստ կարողութեան տալիս է նորանց բաւականութիւն: Խօսելով հողաբաժնիների պակասութեան վրա, մենք պէտք է ասենք, որ այդ երկուքը շատ վտանգներ է պատճառում:

Գիւղացին լինելով արհեստով հողաբաժնի, և կրելով հողի պակասութիւն՝ դիմում է կալուածատէրին, որը օգուտ քաղելով այդ հանգամանքից՝ տալիս է իր հողը վարելու ամենածանր պայմաններով: Մեր ասածին սպասոյցը կարող է լինել իրողութիւնը: Շատ տեղերում կարելի է նկատել, որ գիւղացին վարում է հողը կիսով, այսինքն սեփական աշխատանքով, սեփական ծախսով նա վարում է հողը և արդիւնքի կէսը տալիս է հողատէրին: Այդ պայմանը գիւղացու համար ծանր է, նախ՝ որ նա իր աշխատանքին տէր չէ, երկրորդը, որ հողատիրոջ կախումն ունի և կարելի է ասել թէ նա սարսկն է. հողատէրը չը տալով գիւղացուն իր հողը վարելու, կարող է զցել նրան ամենաշատաւ գրութեան մէջ: Բայց դորանից վարել հողը կիսով նոյնն է, եթէ մի մարդ վեր է առնում միւսից փող 100—1200/0: Գժեղագրաբար մեղանում դեռ ևս չէ ուսումնասիրված հողաբաժնիների պակասութեան և դորանից առաջացած վատ հետեւանքների երևոյթն: Յայտնի չէ թէ գիւղը ինչքան վարելահող ունի, քանի ծխից և հողուց է բաղկացած, բաւականանում են նոքա ունեցած հողով, թէ ուրիշի հողն են վարում և ինչ պայմաններով. ինչ

արքը Պոլսում էր: Վանքը գիւղացի նրան, ինչպիսիք որ նա օգնի վանքին իր պարտքից դուրս գալու, թող տայ հայոց ազգից փողեր ժողովելու, այդ պարտքը վճարելու: Համար: Պոլսում պատրիարքը փոխանակ անմիջապէս կօնդակ տալու վանքի միաբաններին ազգից փողեր ժողովելու համար, ինքն անձամբ ուղեւորվեց Երուսաղէմ, իրողութիւնը տեղի վրա վերաօտուեցելու համար: Հասնելով Երուսաղէմ, պատրիարքը մի օր, երբ ամբողջ միաբանութիւնը ծառի վրա էր, սեղանատան մէջ, կնքել տուեց միաբանների բոլոր խուցերը և յետոյ հետախուզելով արեղանների անձնական արկղերը, գտաւ այդ արկղերի մէջ այնքան դրամ, որ կարողացաւ անմիջապէս վճարել վանքի ամբողջ ազգային պարտքը:

Պատմական իրողութիւնը պէտք չունի կօմենտարիաների: Մենք մեր կողմից ոչինչ զատողութիւն չենք տալիս. թող պատմութիւնը ինքն խօսի իր համար: Պատմութեան իրողութեան առաջ ոչ ոք իրաւունք չունի աչքերը փակել, ոչ ոք իրաւունք չունի պատմական փաստերի ճարտարախօսութեանը խուլ մնալ: Իրողութիւնն այն է որ վանքի ընդհանուր պարտքերը գոյացան նոյն իսկ այն ժամանակ, երբ միաբանները անձնական կարողութիւնը յայտնվեցաւ:

աստիճանի ունեւոր են գիւղացիք և այն: Ի հարկէ վտանգի առաջը առնելու համար, հարկաւոր է մի կողմից ուսումնասիրել հարցը և միւս կողմից զցել նրան գործնական չրջան և քննել պատճառները, որոնք արգելք են լինում այդ գործի ընթացքին:

Պատճառներից մէկը, որ չէ թող տալիս գիւղացուն ձեռք բերել հարկաւոր քանակութեամբ հողը, մեր կարծիքով այն է, որ հողը ծախվում է մեծ քանակութեամբ որի առնելը վեր է մի գիւղացու ոյժից, իսկ գիւղացիներից կամ բոլորովին և կամ սատարելով դժուարութեամբ է կազմվում ընկերութիւն, որը խմբովին, միացած ոյժով առնէ մեծաքանակ հող:

Հողը գժեղագրաբար չէ ծախվում բաժանած մանր մասերի, որովհետեւ կալուածատէրը կամ չէ ցանկանում գլուխ ցաւացնել և կամ ունենալով մեծ պարտք, չէ կարողանում բաժանել հողերը մաս մաս և սպասել մինչև որ գիւղացիները կառնեն այդ բոլոր մասերը: Կալուածատէրը առաւել յարմար է գտնում վաճառել իրան հողը փողատէրի վրա, թէպէտ պակաս գնով, բայց ստանալով արժէքը միանուագ:

Մեր երկրում բնակվող գերմանացիք իրանց մէջ ունեն կազմած հող առնելու ընկերութիւններ և հէնց այդ է պատճառը, որ նրանք հողի պակասութեան չեն կրում: Յայտնի ռուս գրողներից մէկը, Վարդանով, մի և նոյն երևոյթը նկատել է և ռուսաբանակ գերմանացիների մէջ: Մեր գիւղացին չէ կարողանում ընկերութիւն կազմել, որովհետեւ ընկերութիւն կազմելու գաղափարը և կանօնները չը գիտէ և բացի դրանից արգելքը սատականում է մեր հողերի պատկանելութեան, քանակութեան և սահմանների անորոշ լինելու պատճառով, նա միանաւոր, որ մենք մանր հողերի կրէդիտի համար հիմնարկութիւններ չունենք: Այս հանգամանքների և երկույթների վրա մենք պէտք է առանձին ուշադրութիւն դարձնենք այն պատճառով, որ տարուց տարի Կովկասում դատարկ հողերը պակասում են, հողի գինը բարձրանում է, հողերը ընկնում են փողատէրերի և դուռնարատէրերի ձեռքը, և այդ

Յիսուս տարի սրանից առաջ Կ. Պոլսի Պոլսում պատրիարքի այդ տեսակ հնարքով վանքի ամբողջ պարտքերը վճարվեցան: Իսկ այն ժամանակից կրկին գոյացան Երուսաղէմի վանքի մէջ ահաբեկ պարտքերը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱՏՈՒՅՑ

Նոյեմբերի 20

Բագու-Թիֆլիսեան երկաթուղու կառուցումն մեծ ազդեցութիւն ունեցաւ գծին մօտակայ թուրք գիւղացիների վրա, որոնցից շատերը մինչև վերջին ժամանակները աւազակութեամբ էին պարագում: Այս տարի դրանք ոչ թէ միայն կարողացան ծանօթանալ և յարաբերութիւններ ունենալ մեր աշխատող բանուոր, և նոյնպէս մեր միջին դասակարգի հետ, այլ և կարծես կատարելապէս հասկացան տնտեսական կեանքի նշանակութիւնը, որով հարկաւոր համարեցին թողնել իրանց նախկին կեանքի եղանակը և հետեւել այդտեղի, մանաւանդ օտարական հայ բանուորների աշխատասիրութեան օրինակին, տեսնելով որ դրանցից իւրաքանչիւրը գալիս են հեռու գաւառներից բանելու համար, լինելով միակ նեղուկ իրանց ընտանիքի, հրաժարվելով նիւթական միջոցների վստաստելու համար, հայրենիքից և ընտանիքի քաղցր կեանքից: Կօպիտ և կիսավայրենի թուրքերը սկսեցին մտնել աշ-

պիսով դժուարանում է գիւղացու համար հող ձեռք բերելը: Այժմ մեր գիւղերը դեռ ևս հող ձեռք բերելու կարողութիւն ունեն, որովհետեւ հողերը այնքան թանկ չեն, և մեր գիւղացին լինելով աշխատասէր, հեշտութեամբ կարող է հողեր ձեռք բերել, դնելով իրան աշխատած կօպէկները հողի մէջ և բարւոքել դրանով իրան և իր որդոց դրութիւն ու ապագան, իսկ 10—20 տարուց յետոյ կարելի է հանգամանքները փոխվեն, և մեր գիւղացին ընկնի այն դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ են Ռուսաստանի գիւղացիք, և այն ժամանակ նա ստիպված կը լինի գաղթելու որոնել իր փրկութիւնը: Այդ պիսով մեր անհոգութիւնից կարող են առաջանալ մեծ վտանգներ, որոնց առաջը մենք կարող ենք առնել ներկայումս իսկ ոչ ապագայում: Կրա համար, մենք կարծում ենք հարկաւոր է կազմել մեծ առևտրական ընկերութիւն, որը առնի յարմար ժամանակում հողը, բաժանէ մանր մասերի և ծախի մեր գիւղացիների վրա: Այդպիսով գիւղացիները գնելով իրանց աշխատած կօպէկները հողի մէջ, փոքր առ փոքր կը լրացնեն հողի պակասութիւնը և կը բարւոքեն իրանց դրութիւնը:

Բացի գրանից հարկաւոր է տարածել գիւղացիների մէջ ընկերութեան գաղափարը, որ ներքանք այդ միջոցով կարողանան ձեռք բերել հողեր և բացի այդ ամենը, հարկաւոր է կազմել մանր հողային կրէդիտի հիմնարկութիւններ, որոնք տան նրանց միջոց գնել թէ ամեն մի հող, թէ իրանց հողաբաժնիները, որովհետեւ տեղեկութիւնը, ինչպէս ուրիշ տեղեր, չէ փոխ տալու: Բագուի, Գանձակի և Նրեանի նահանգի գիւղացիներին փող, որ նրանք գնեն իրանց հողաբաժնիները կալուածատէրերից, իսկ այդ գընելը չուտով օրվայ հարց պէտք է դառնայ:

Ս. Բանաստեանց

խառնուրդներ չըլանը և այսօր երկաթուղու բան-
ւորներին մեծամասնութիւնը կազմում է գիւղական
թուրք աղագրանակութիւնը: Կրանք առաւօտից
մինչև երեկոյ անխնայ կերպով բանում են,
իրանք ուրախանալով իրանց աղագրանի կենսա-
կան եղանակի փոփոխութիւնից:

Օրերուս Բագուի մէջ բացվեցաւ ծովագնա-
ցութեան ուսումնարանը, որի նպատակն է
պատրաստել նաւավարներ: Դեռ աշակերտներ
թիւը քիչ է:

Հայ թատրոնասէները այս օրերս տուեցին
մի ներկայացում Բագուի մէջ: Խաղացին «Բանդ-
ված օջախ» հեղինակութիւն Գ. Սուրբուկեանցի:
Ներկայացումը անչափ բաւականացուցիչ էր
և ժողովուրդը մեծ ուրախութեամբ կը ցանկա-
նար որ երկրորդ ներկայացումն էլ արվէր:

Երուսալէմի Ս. Յակովբէի վանքի միաբանու-
թեան հաւատարմատար հայր Մամբրէ վարդա-
պետ Մարկոսեան երկու շաբաթ է որ մեր քա-
ղաքումն է: Արժանապատիւ հայր-սուրբը շատե-
րին ասում է որ Երուսալէմի վանքի մէջ գտնու-
ման ան քանդանք, որոնց շնորհով վանքի
դասնաբանը այժմեան աննախնայելի դրութեան
է հասցրած: Բագուի հարուստները մեծ գո-
մարներ են ստորագրում վարդապետի հանդա-
նակութեան թերթի վրա:

ՆԱՄԱԿ ԿԻՆՎԻՑ

Մայիսի 20-ին նոյնիմբերի 12 ժամին առաւօ-
տեան երեկոյ Գրաւորացի դերասանուհի Սա-
րա Բերնար հասաւ Կիւով: Մեր հասարակութեան
ընտիր մասը, վաղորդք իմանալով այդ հռչակա-
ւոր դերասանուհու գալու ժամը, լցրել էր երկա-
թուղու կայարանը: Բոլորն էլ անհամբերու-
թեամբ սպասում էին 12 ժամի մտնելուն: Ընդ-
հանուր խոսակցութեան առարկան Սարա Բե-
րնարն էր, մի քանիսը խօսում էին նրա վրա, թէ
ինչ համակրանքով ընդունեցին նրան Վիեննա-
յում, իսկ մի քանիսն էլ խօսում էին, թէ ինչ-
պէս հիւրասիրեցին նրան Օդեսայում (քարով
ու աղ դրած վարունկով): Կային որոնք վա-
տարանում էին Օդեսայի ուսու ինտելիգենցիայի
արարքը, կային նոյնպէս այնպիսները, որոնք
ընդհակառակը գովում էին այդ բանը: Յայտնի
բան է, որ այս վերջինները կազմում էին հա-
նահրէշական մի պարտի: Ի վերջոյ 12 ժամը
լրացաւ, եկաւ և Սարա Բերնար: Ամբողջ, որ
կազմված էր, գլխաւորապէս, ուսանողներէ,
թնդացից օղը անվերջանալի ուրաներով ու
կեցցէներով, բայց և այստեղ գտնվեցան մի քա-
նի անհասներ, որոնք կազմելով «Կիւովիանին»
լրագրի խմբագրի կուսակցները, սկսեցին շուա-
նել և աղմուկ բարձրացնել, բայց այդ անկար-
գութիւնը աննշմարելի եղաւ, որովհետեւ Սարա
Բերնարին համակրողները թիւը անհամեմատ շատ
էր: Տեղուց քաղաքային թատրոնի գիրկէն
պ. Սիտով և դերասաններից մի քանիսը շատ
սիրով ընդունեցին Սարա Բերնարին: Նա նու-
տեց իր համար պատրաստած կառքի մէջ
և ուղևորվեց դէպի «մեծ հիւրանոց»: Մի-
և նոյն օրը, քաղաքային թատրոնում, տե-
ղի ունեցաւ Սարա Բերնարի առաջին ներ-
կայացումը: «La dame aux camelias» Ալեքսանդր
Դյումայի հեղինակութիւնը: Թատրոնում, ինչպէս
ասում են, «ասեղ գցելու տեղ չը կար»: Երեսը
թէ չէ բնով վրա հռչակաւոր դերասանուհին,
թատրոնը զողողող ծափահարութիւններով ու
կեցցէներով, լոճաներով և պարտերով պատկեր
էր, որ թաթում էին բնով վրա. Սարա Բե-
րնարը խաղում էր «Վարդապետ Գօտիէի» դերը:
Կիրթիկական հայեացքով քննել այդ խաղը, իմ
ուժից վեր է, միայն այն կասեմ, որ Սարա Բե-
րնարը այնքան հիանալի և արտիստիկական ձևով
կատարեց իր դերը, որ համարեա ամբողջ հասա-
րակութեան վրա (ի հարկէ խօսքս հասկացող
դասի վրա է) մի ընդհանուր տխրութիւն պատ-
ճառեց, դրան սպացուց կարող են լինել այն
նուէրները, պատկերը, ծափահարութիւնները և
կեցցէները, որ ստացաւ երեւելի դերասանու-
հին:

Ներկայացումից յետոյ մօտ 15 անգամ դուրս
կանչեցին նորան, այդ անոնները, գլխաւորապէս
ուսանողութիւնն էր, որը ցանկանում էր ցոյց
տալ իր համակրութիւնը դէպի հռչակաւոր տա-
ղանքը առանց հռչակութիւն անելու թէ ինչ
ազգութեան և դասնութեան է պատկանում

և երազական հռչակ ստացած դերասանուհին:
Կիւովում Սարա Բերնարը կը մնայ չորս օր,
որի ընթացքում կը տայ չորս ներկայացում:
«Ֆրու-Ֆրու», «Ալքիմանա Լէկուվեր» և «Սը-
ֆինկա»: Երեքշաբթի նա պէտք է ուղևորվի դէ-
պէ Մօսկվա:

Ալեքսանդր Սիմօնեանց

ՆԱՄԱԿ ՀԱՄԱԽՈՒՅ

Նոյնիմբերի 18-ին

Հայերին մէջ օտարտոյ չէ այն երեւոյթը, որ
երբ մի որ և է հանճարեղ հրապարակախօս, մի
որ և է անկեղծ աղագրան, մի որ և է առողջա-
գատ անհատ ցաւօք սրտի հրապարակում է իր
ազգի կամ իր ժողովրդի անմխիթար պակասու-
թիւններն ու թերութիւնները՝ առաջարկելով մի
և նոյն ժամանակ վերաբուժական դարմաններ,
երբ նա անխնայ մտաբերում է աղագրան ասպա-
րիզում գործողների զեղծումները՝ նրանց ուղ-
ղելու նպատակով, փոխանակ ամբողջի համակ-
րութիւնը ու բարոյական խրախուսը վայելելու,
ենթարկվում է զանազան խաւարաւորների ու
օրակորսանների կողմից հալածանքի, զրոյա-
րութեան ու դատաւանդութեան, դրօշմում է
նրա մաքուր ձգտումը աղագրան, եկեղեցական
և այլ անտեղի անակախներով: Այդ արտը
որով համայն հայերս իսպառ վարակված ենք,
բայց որը վաղուց հարկաւոր էր արմատախի
անել, աւելի ժողովրդականութիւն է ժառանգել
այնուհոգ, որ հասարակութիւնը զեղծվում է
ասիական աղիւթութեան ու ֆանատիկոսութեան
ցիւխ մէջ, ուր տակաւին թաղաւորում են հին
նահապետական նախապաշարմունքները: Այդ-
պիսի ողորմելի քաղաքների կարգին բաղը ունի
պատկանելու և Շամախին: Գիցուք թէ մեզանից
— շամախցիներից մի ինքնաճանաչ պատանի, մի
անհասնէր երիտասարդ մամուլի միջոցով հա-
ղէս է հանում մեր թող կողմը և անա մենք
նրա յօդուածը լրջօրէն կարդալու, անաչառա-
պէս դատելու և խոհեմութեամբ նրանից օգտվու-
լու տեղ անմիջապէս ուղղում ենք դէպի խեղճ
յօդուածագիրը մեր կրքերի թունաւորիչ շանթե-
րը, ձգում ենք նրա անձը ծաղրաբանութեան,
զուարճախօսութեան և բամբասանքի տակ: Երեա-
կայեցէք, պատուելի ընթերցողներ, պարոնի
տրամադրութիւնը, երբ նա դէթ առաջին ան-
գամ հանդիպելով այդպիսի խոչնդոտների ստիպ-
վում է չարտասանել և խօսք այն իրերի վրա,
որոնք ծարաւը խեղդում է նա,— խախտել իր
հպելի թէ բողբոջած բուն մարդկային մեծակշի-
ւորութիւնները: Սակայն, թող չը վշտանայ այն
ազնիւ պարոնը, թող մերկայանէ մեր տկարու-
թիւնները ու պակասութիւնները, որքան նե-
րում են իր ոյժերը, քանզի ճշմարտութեան
պաշտօնեայ լինելն է բարոյական պարտա-
կանութիւնը ամեն մի անձի, որ ձգնում է «մարդ»
վան անունը կրելու, իսկ ընդհակառակը, սքո-
ղել վարագործել նա՝ է կատարեալ ամբողջու-
թիւն: Սիրելի համաքաղաքացիներս, մինչև երբ
պէտք է այս տաժանակիր լծի տակ մաշվենք ու
տանջվենք, մինչև երբ պիտի հալածենք մարդ-
կային պարտականութիւնները, ժամանակ է,
ժամանակ, սթափվելու մահաբեր թանձր քնից,
ճանաչելու, վերջապէս, մեզ ու մեր կենսի
խորհուրդները... Թողնեք այդ անպատեթիւն
վրդովով խօսքերը ու դառնալու դէպի մի ուրիշ
ամենակարող խնդիր: Շամախու անտեսական
ոյժերը վերջին ժամանակներում սիտեմատի-
կապէս քայքայվում են և այժմ ոչ մի ժողո-
վուրդ այնպէս չէ մաքառում իր գոյութեան
ճակատագրի դէմ, ինչպէս մենք: Ճշմարտը
խոստովանված, շամախցիների թշուառ վիճա-
կը շատ անգամ, ինչպէս հասարակական շահե-
րով մի նշույլ անգամ հետաքրքրվողի, մինչև ան-
գամ և չը հետաքրքրվողի, նոյնպէս և մեր խոր-
հորդածութեան ենթակայ է եղել և մենք հասել
ենք այն եղանակացութեան, որ մեր ցաւերը փա-
րատելու համար անհրաժեշտ է հիմնել մի ընկե-
րութիւն, սակայն ի նկատի ունենալով շամախ-
ցիների անտարբերութիւնը ու սառնասրտու-
թիւնը դէպի մի որ և է շահանք տաւարկու-
թիւն, մասնաւորապէս որ մենք... որոշեցինք լռել
թողնելով այդ պատիւը հասարակութեան մէջ
զիրք ունեցող մի անհատի. այո, և չը սխալվե-
ցինք մեր որոշման մէջ: Պատուական «Մշակի»
վերջին համարներից մէկում զետեղված էր Շա-
մախուց մի նամակ, որի հեղինակը — պ. Փիլի-

բուղաղեանցը մեր նեղ վիճակը բարեփոխու-
համար առաջարկում է կազմել մի «անտեսական»
ընկերութիւն ակցիայով: Ի՞նչ էք կարծում,
ազնիւ ընթերցողներ, նա ևս աղաւտ չը մնաց
շամախցիների պարսաւաբարեից, որոնց մէջ
քաղաքայի հանդիսացաւ համուղ ոմն Ն. Միտք
չունենք, աւել երկարաբանել սրա և սրա նը-
ման հիւանդոտների բռնած սև ընթացքի վրա,
զիմում ենք դէպի մեր բարեմիտ ու խելա-
ցի երկտեսարեւորներ ու խնդրում իրանց ուշադ-
րութիւնը նուիրել մի երկու բալէ մեզ: Խօսքս
պ. Փիլիբուղաղեանցի—մեզ համար օրուան պա-
հանջ դարձած—հարցի վրա է: Ամենքին յայտնի
է, որ շերտապահութիւնը, գինեգործութիւնն ու
հողագործութիւնը ամենաարդիւնաւոր գիւղա-
անտեսական արհեստներ են. յայտնի է նոյնպէս,
որ ուր երկրը իր յատկութիւններով ու կլիման
նպաստամատուց են լինում անուանեալ պարագ-
մունքների յառաջարկութեան, այնտեղ նրանք
բաղկացնում են տեղական ժողովրդի նիւթական
միջոցների գլխաւոր նեցուկը, այնտեղ նրանք
հասել են իրանց կատարելագործութեան որոշ
ստիճանին: Բայց աւագ, միզանում այդպէս
է. մենք, ինչպէս և ամեն բանում, բացառու-
թիւն ենք կազմում. ճշմարտ է ունենք արգա-
ւանդ ու հարուստ դաշտեր, ապահոված ենք
հիւանդի կլիմայով, բայց սղիւտութիւնը ու ծու-
լութիւնը դատապարտել են չը շահել մեր բը-
նութեան բերքերից ու հարստութիւններից: Փաս-
տերը հեռու չեն: Երեւանագիւղները բաւական
հնչու ու օգտաւէտ պարագմունք է, և մեր լայ-
նածաւալ ու անմշակ հանդերը ընդունակ են
բուսոցիւն շերտի միակ կերակուրը՝ թիւններ: Եր
շամախցու բազում չը կայ ամենամեղ չորս
անգլին թիւնները, Հետեաբար շերտապա-
հութիւնը՝ այդպիսի ձեռնտու հանգամանքնե-
րում՝ պիտի լինէր շամախցիների հայ հայթայ-
թիւնը գլխաւոր աղբիւրը: Բայց ո՞վ է մեզանում
պարագմունք նրանով. ամբողջ 840 հայ անից
երկուսը, ափսոս, ասուք են մի ծաղկով դարուն
չի լինի: Այս թիւնի ծառերը, որոնց հետեւի
շատ եւրօպայի ազգեր ճրագով են մանդալիս և
չեն ձաղում, մեզ ծառայում են իրանց պատեղ-
ներով ու վառելիքայտով միայն: Շամախու
շերտապահութիւնը, որ այնքան հռչակված է,
առանց բացառութեան գտնվում է թուրքերի
ձեռքը. և թէպէտ վերջինները պարագմունք են
նոյն ձեռով, ինչպէս շատ տարիներ առաջ իրանց
նախնիքը, այնու ամենայնիւ միջ շահաստացու-
թիւն ունեն նրանից: Նոյնը կարելի է ասել և
գինեգործութեան ու երկրագործութեան վերա-
բերելով, այն դանազանութեամբ միայն, որ վեր-
ջիններն են գլխաւորապէս հայի, իսկ մասամբ և
թուրք գիւղացիների ձեռին: Ո՞վ կը մոռանայ
շամախուց երկու-երեք վերստ հեռաւորութեամբ
ընկած Մարտաս, Քաթանջ, Սաղեան, Գիւրջի-
վան և այլ հայ-գիւղերի գինին, որը աղաւտ կա-
րող է մրցել իր յատկութեամբ Ախալթիւ գինու
հետ. ո՞վ չէ անտարբեր Արփոսից գիւղը, որը
անցաւ սով-տարին մշակ Շամախու տուեց
մօտ 500 թաղար (թաղարը 25 պուղ) ցորեն:
Այդ ամենը ստանում է շամախցի աշխատա-
ւոր ու տուկուն չինականից և դարձեալ արհամա-
րում է նրա կոշտ ձեռքերը:

Եթէ վերելիւնայ երեք գիւղատնտեսական ար-
հեստները՝ գինեգործութիւնը, հողագործութիւնը
ու շերտապահութիւնը այնքան առատ են վար-
ձառում իրան հին-նահապետական ձեռով ար-
դիւնագործողին, ապա որքան առատ կը վար-
ձառէին նոր-եւրօպական սիտեմատով գործո-
ղին. երանի թէ վերջինները մենք լինէինք, մենք
ծոյլ-շամախցիներս: Տնտեսականութիւն ասած
բառը մեզ համար մի վերացական միտք է. իսկ
արհեստները: Կօչկալարութիւնը, ասիական դեր-
ձակութիւնը և այլն, լակոնօրէն կարելի է ասել,
վերջին աստիճանի աննախնայելի դրութեան
մէջ են: Բայց որքան էլ մեր ներկայ դրութիւնը
անտանելի ու ողորմելի լինի, այնու ամենայ-
նիւ համեմատելով մօտ-ապագայում շամախցի-
ներին սպասող վիճակի հետ, եթէ միայն կամա-
կորութեամբ շարունակենք մեր անհոգ ընթաց-
քը, պիտի համարվեն աւելի բաղաւոր ու եր-
ջանիկ. և անա ինչու: Ինչպէս տեսնում էք, յար-
գոյ ընթերցողներս, տնտեսականութեամբ վատ
թէ լաւ, քիչ թէ շատ պարագմունք են գլխաւո-
րապէս մեր գիւղացիները, որոնք մինչև այժմ
չունենալով ճանապարհի յարմարութիւններ իրանց
արիւն-բրտնքով վաստակած արդիւնքը՝ ցորեն,
գինի, դանազան մրցիղէներ ու ընդհանրապէս ու-

րիշ քաղաքներ վաճառահանելու, ծախել են մեզ
էժան գներով, բայց երբ կանցնի Բագու-Փիլի-
սեան երկաթուղին, թողնելով Շամախին իրանից
դուրս, այն ժամանակ բոլորը, ինչ որ պիտի ուղարկ-
վէր Շամախի, կը ճանապարհի ուրիշ տեղեր թանգ
գներով վաճառելու, իսկ մենք կամ կը մնանք
թամարղու մեր հարուստ հայրենի երկրի բեր-
քերից, կամ պիտի գնենք նրանք ուրիշներից
թանգ: Պատճառը—մեր ծուլութիւնը ու անհո-
գութիւնը: Շատ իրաւացի է նկատում պ. Փիլի-
բուղաղեանցը ասելով: «Ինչեւ երբ պիտի բը-
նութեան հարստութեան մէջ քաղցած ու սոված
մեռնենք:» Յանկալի էր, որ պարոնի նամակին
արձագանք տալին մեր բարեմիտ երկտեսարդ-
ները, որոնցից կախված է Շամախու և ներկան
և ապագան: Կնքում եմ նամակս հաղորդելով
ձեզ Շամախու միակ մխիթարական լուրը: Հայոց
երկեսեւ ուսումնարանների գրադարանը օր ըստ
օրէ ծաղկում է, նոր գրապահ պ. Ա. Գ. Գ. ան-
խնայ աշխատութեան շնորհիւ. զրքերը նախկին
փոշու տուր աստիճանից ազատված, ընթերցող-
ներ է կանչում. բայց ափսոս, վերջինների թիւը
սահմանափակ է:

Պետրոս Մելեքեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱ

Յանցաւոր Գիտօի գործը քննող դատա-
րանի նիստերից մէկի ժամանակ յանցաւորը
աւելի հանգիստ էր երևում և զբաղված
էր իր ձեռագիրներով: Նա այլ ևս չէր աւ-
նարկում, որ մարդիկ փորձում են նրան
սպանել: Փաստաբան Բօրնիզոն իր ցանկու-
թեան համեմատ ազատվեցաւ Գիտօին
պաշտպանելուց: Յանցաւորը հիմնվում էր
բժիշկների վկայութեան վրա, որոնք յուլիսի
2-ին յայտնեցին, որ Գարֆիլդի վրէժը մա-
հացու չէ: «Նս Աստուծու գործիք էի, աւե-
լացրեց Գիտօ, և յոյս ունեմ, որ նա ինձ կը
պաշտպանի: Մինչև այժմ Նա ինձ շատ է
օգնել: Ուղղաբե և Լեմի բժշկները յայտ-
նեցին, որ նախագահի ստացած վէրքը մա-
հացու էր և ցոյց տուին երրուեալ դատա-
ւորներին Գարֆիլդի մարմնից հանած գնդա-
կը: Այնուհետեւ փաստաբան Սփօլի պաշտ-
պանողական երկար ճառ արտասանեց: Նա
աշխատում էր ապացուցանել յանցաւորի
անպատասխանատուութիւնը: Երբ Գիտօ լսեց
ակնարկութիւն, թէ նա խելագար է ձեռա-
նում, անհանգստութեամբ շարժվեց և
բարկութեամբ ասաց. «Նս երբեք չեմ
ձեռացել: Խելացի թէ անմիտ, բայց ես գոր-
ծել եմ խելքի առաջնորդութեան համե-
մատ:» Սփօլի ապացուցանում էր, որ խե-
լագարութիւնը յանցաւորի բնական է մէջ
ժառանգական է: Գիտօի պապի 10 որդի-
ւանցից չորսը խելագար էին, որոնց թուում
և յանցաւորի հայրը: Այնուհետեւ պաշտ-
պանը նկատագրեց յանցաւորի կեանքը երե-
կայութիւնից սկսած, մասնացոյց անելով
Գիտօի սխալանքների վրա: Այդ պատմու-
թիւնը, որի մէջ ծիծաղելի դէպքեր էին
պատահում, շատ հետաքրքրեց յանցաւո-
րին, որ անդադար բացականչում էր. «յե-
տոյ, շարունակեցէք: Շատ հետաքրքիր
պատմութիւն է և բոլորովին ճշմարիտ:»
Սփօլի յիշեց յանցաւորի կրօնական համոզ-
մունքը, որ Աստուծոյ պէտք է վճարէ նրա
պարտքերը, որ յանցաւորը անաջող գործեր
է առել զրքեր հեղինակելու և դատաւո-
սութիւնների կարգաւ համար:

Գատարանի մէջ յայտնվեցաւ, որ 1877
թվականին Գիտօ բնատուրված է և կրի մի
քանի օրով Չիկագօ բնակի մէջ: Երբ Սփո-
լի կարդում էր Գիտօի նամակներից մի
քանիսը, յանցաւորը պահանջեց, որ նա
թվական կարգի հետեւէ: Սփօլի, պաշտպա-
նողական ճառը վերջացնելով, յայտնեց յոյս,
որ երբեք եւլ դատաւորները վճիռ կը կայա-
ցնեն իրանց խղճի համեմատ: Վկաներից

մէկը բժշկել Ռոյս ցոյց տուեց, որ նա դեռ
1876 թւականին Գիտօր մէջ ժամանելու
կան խնդարութեան և բնական խնդր
պակասութեան նշաններ գտաւ: Բօստօնի
կանչված վիճակներից մէկը յայտնեց, որ Գիտ
գնացել էր Բօստօն գատախօսութիւն կար
դարձ և այնտեղ յայտնել էր, որ ինքը
պատկանում է «Յիսուս Քրիստոս և ընկեր
ութիւն» առեւտրական տանը: Միւս վկա
ներից էլ մի քանիսը պատմեցին այնպիսի
անցքեր, որոնք ապացուցանում են յանցա
ւորի խնդարութիւնը: Այնուհետեւ Գի
տօին իրաւունք տրվեցաւ իր Հեռագիրը
կարդալու համար, որ հետեւեալ բովանդա
ւորութիւնն ունէր: «Ես ցանկանում եմ, որ
դատարանին յայտնի լինի իմ ամբողջ ան
ցեալ կեանքը, որովհետեւ դա անհրաժեշտ
է, որպէս զի նա իմանայ, արդեօք ես սպա
նեցի նախագահին, թէ Աստուած ինձ զըր
դեց: Գրա համար հարկաւոր է իմանալ իմ
կեանքի անձնական, քաղաքական և տա
նտեաժառանգական հետազոտութիւնը և ես
պահանջում եմ, որ դատարանը, մամուլը
և հասարակութիւնը ծանօթ լինեն իմ
կենսագրութեան հետ: Ես կատարեալ ար
դարագատութեան եմ սպասում և թող
չեմ տայ, որ իմ գործին կողմնակի միջոց
ներով նայեն: Անցեալ դարձանք մի քանի
լրագիրների կատարութեամբ յարձակում էին
նախագահի վրա, որովհետեւ նա ոչնչացնում
էր հանրապետական կուսակցութիւնը ան
միտ ընտրութիւններով: Ես արեցի այն,
ինչ որ այդ լրագիրների կարծիքով հարկա
ւոր էր անել: Բայց նախագահին վիրաւո
րելուց յետոյ, հէնց այդ լրագիրները սկսե
ցին նրան զովաբանել: Այդ լրագիրները և
նախագահի բժշկները, որոնք իսկապէս
նրան սպանեցին, պէտք է բաժանեն ինձ
հետ դատապարտութիւնը: Պէտք է այն էլ
ասել, որ ես լրագիրների ատաճների վրա
ուշադրութիւն չէի դարձնի և նախագահի
վրա ընկալելու չէի արձակի, եթէ դրա հա
մար ինձ ինքը Աստուած չընտրէր: Ես մա
հուանից չեմ վախճում: Ես միշտ եղել եմ
Աստուծոյ հաւատարիմ ծառայ: Ես մար
դասպան չեմ: Այդ գործը ինձ Աստուած
ներշնչեց, ինչպէս Աբրահամին և այլ սուր
բերին»: Այնուհետեւ Գիտօ մահուան պատ
ժով սպանաց նրանց, որոնք կը համար
ձակվեն իրան սպանել: Նա յոյս ունի, որ
պօլիցիան և դատարանը կը պահպանեն
իրան, որովհետեւ լուսաւորված ամբողջ աշ
խարհի հայացքները նրա վրա են դարձ
նում: Յանցաւոր ցանկութիւն յայտնեց, որ
դատաւորները և երգիծականներ իր գործը
նքնեն փաստերի և օրէնքների համեմատ,
ամբողջ պատասխանատուութիւնը երգուեալ
դատաւորների վրա թողնելով:

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանական լայխտագրի մէջ քննվում էր առաջարկութիւնը այն ծախսերի բիւզ- ժէտը հաստատելու համար, որոնք հար- կաւոր կը լինեն Համբուրգ քաղաքը Գեր- մանիայի հետ միացնելու համար: Առաջա- դէմ Հինէլ նկատեց, որ այդ միութեամբ ստացված միակ փոփոխութիւնը այն է, որ այսուհետեւ մաքսերը կը ստացվեն Համբուր- գի մաքսատնների մէջ: Համբուրգի միացնելը Գերմանիայի հետ պետական դաշնագրու- թիւն չէ, որ միայն կայսրը կարող է հաս- տատել: Այդ գործը կատարել է միայն պետական կոնցլերը, հետեւապէս ամբողջ պատասխանատուութիւնն էլ նրա վրա է ընկնում: Իշխան Բլամարկ ասաց, որ նա

իր գլխավոր պարտականությունն է համարում բոլոր օրինաւոր ճանապարհներով ձգտել Գերմանիայի միութեանը, Նա յոյժունէր, որ այդպիսի նպատակ ունեցող մի նիստը կարող է պարլամենտի կողմից ընդգրկմաւորութեան հանդիպել: Ներկայումս միացեալ կառավարութիւնները աւելի լատպաշտպան են գերմանական միութեան քան թէ բայխստապը: Սհա ինչքան յետ են մնացել մեր ձգտումները դէպի միութիւն: Տաս տարի սրանից առաջ ոչ ոք չէր էլ մտածի ընդգրկմանայ առաջարկված միջոցներին, բայց ներկայումս բայխստապը բաժանված է ութ կուսակցութիւնների որոնցից ոչ մէկը չէ կարող մեծամասնութիւն կազմել և չունի մի որոշ նախագիծ: Շատ հեշտ է մեղադրել կառավարութեանը և ասել՝ վերցրէք ազատամիտ միխստերներ Ես համոզված եմ, որ մեղքը կառավարութեանը չէ, այլ կուսակցական ատելութեան և յարձակողական ոգու, որ այդքան յատուկ է գերմանական բնաւորութեանը: Ես չեմ կամենում, որ ինձանից շնորհակալ լինեն: Ես միայն իմ պարտականութիւնն եմ կատարում: Պէտք է շնորհակալ լինել կայսրից որ վտանգի ենթարկեց իր գահը Գերմանիայի միութեան համար: Ինչ ինչ կը մերբերի, ես սովոր եմ ապրել և առանց շնորհակալութեան, որ շատ անդամ ձեռք եմ բերել և դարձեալ կորցրել եմ: Ինթադրենք, որ Բոհեմիայի հետ պատերազմը չաջողվեր, որ այդ պատերազմի ժամանակ Պրուսիան յաղթվեր: Ինչ կանէին ինձ հետ այն ժամանակ փոխանակ այն ոգևորված ցոյցերի, որոնց առարկայ էի ես 1866 թ.ս. վանին: Ինձ վրա ամենքը կը յարձակվէին իբրեւ մի յանցաւորի վրա, որ թնթեամբ տութեամբ իր հայրենիքին կորուստ պատճառեց: Պառաւ կանայք մեզ աւելնելով կը ջարդէին՝, ինչպէս ասաց ինձ իմ ընկերներից մէկը: Ուրեմն կսեղով Գերմանիայի միութեան գործը, ես վտանգի ենթարկեցի իմ կեանքը, պատիւը և իմ ամբողջ ապագան: Կամ թէ ինթադրենք, որ չաջողվեր պատերազմը Թրանսիայի հետ, որի սկսվելու համար ես աւելի քիչ սեղաւոր էի, քան թէ առաջինի ժամանակ: Միթէ միակ մեղաւորը պետական կանցրերը չէր լինի: Ես հիմա գիտեմ, թէ ինչ է հասարակական կարծիքը: Մինչդեռ իմ ծառայութիւններս երկու դէպքերում էլ միատեսակ էին՝ աջողվին այդ պատերազմները թէ ոչ, թէպէտ վերջին դէպքում ես ատելութեան զոհ կը դառնայի, դուք աւելի էլ վատ վիճակի ենթարկէի: Սյսպէս թէ այնպէս գլխաւոր ծառայութիւնը գործերին է պատկանում, իսկ ինձ ոչ որ ոչինչով պարտական չէ, որովհետեւ, կրկնում եմ, ես միայն իմ պարտականութիւնն էի կատարում:՝ Լասկեր նկատեց, որ վերջին ընտրութիւնների հետեւանքները սպացուցին, որ երկիրը չէ համարում կանցրերի երեւելի նախագիծները: շխտան Բիսմարկ թէ մինչեւ այժմ մատուցել է և թէ այսուհետեւ էլ կը մատուցաւէ երկրին նշանաւոր ծառայութիւններ արտաքին քաղաքականութեան ասպարէզի րա, բայց ներքին հարցերը նա չէ կարող ձուլ: Ազատամիտ կուսակցութիւնները կը փանտան և մի ընդհանուր նախագիծ կը հայկեն: Ներքին խողաղութիւնը միայն այն ժամանակ կը վերականգնվի, երբ ազատամիտ կուսակցութիւնը կողողէ կատարված խաղները: Իշխան Բիսմարկ մերժում էր պատամիտների յաղթութիւնը վերջին ընտրութիւնների ժամանակ և թուանշաներով ապացուցանում էր, որ ընդհակառակը ընտրութիւնների ժամանակ պահպանողաւ

կանները յաղթեցին: Այդ Բիսմարկի հաս-
տատ համազմունքն է, որ ոչ ոք չէ կարող
փոխել:

ՄԻ ԼՈՒՐ Կ. ՊՕԼՍԻՅ

Կ. Պօստի լրագրիչներուն կարգում ենք հետեւեալը: Կը լսեմք թէ Ս. Պատրիարք Հայրն ուրբաթ օրն այցելութիւն տեսնուի Ս. Նախարար Բարձր. Սայիտ փաշային, որը հետ կրկնորէն խօսակցելէ յետոյ, իւր զրաւուր հրաժարականը ներկայացուցեր է Յետ բանակցութեանց, Ն. Բարձրութիւնը ինդրեր է Ս. Պատրիարքէն որ իւր հրաժարական ըստ կանոնի Մէզայիպ Միւտիւրիին, այսինքն Կրօնային գործոց Տեսչի յղէ, և յիրաւի Ն. Սրբազնութիւնը Պատրիարքարան վերադառնալով, պահարանի մէջ մէջ գրեր է իւր հրաժարագիրն, ուղղեալ առ Զիվէր պէյ՝ Մէզահիպ Միւտիւրի, և սմա յղեր է:

Ազգային Երեսփոխանական Ժողովոյ և
Վարչական Խորհրդոյ ատենապետներն երէկ
Խասդիզ գնացեր են Նորին Արքայազնութեան
հետ բանակցելու:

Այս բանակցութիւնք երեք ժամէ աւելի տներ են, բայց արդիւնքը դեռ չիմացուեցաւ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Լրագիրներին Լօնդօնից հեռագրում են նո-
յեմբերի 16-ին. «Times» լրագիրը լսել է, որ պար-
լամենտը յուշվարի 19-ին կը հաւաքվի:

— Գերմանական լրագրիւնները հաղորդում են, որ Բրեւելավիլը ուսանողները մէկ համալիրական աղբիւս ուղարկեցին Էլշտան Բիմարիւիլին, Վիլհէմ-կայսրի գահական ճառի բովանդակութեան առիթով: Կանցլերը պատասխանեց նրանց մէկ նամակով, որի մէջ հաղորդում է, թէ ներկայացրեց աղբիւսը կայսրին և որ նա մինքն բաւականութեամբ ընդունեց ուսանողների զգացմունքների այդ արտայայտութիւնը:

— Լ. Պօլսում նորից չուզված են այս օրերս սուլթանի կհանքի գէմ դաւադրութիւն քացեւոր: Բանտարկված են 90 մարդկանցից աւելի, որոնց մէջ բարձր աստիճանաւորներ եւ զբոնաւորներ են: Լ. Պօլսի բերդապահ զօրքը, չորս ամսվայ ոռժիլը չը ստանալու պատճառով ստաւ իր զբոյսը վանել եւ կառավարութեան դէմ եւ ի, Պօլսում վախճնում են գնդաւորական ցոյցերից:

— «Times» Լրագրին Կ. Պոլսից հեռագրում են հետևեալը. Թիւրքաց պարտատէրերի պատգա-
նաւորների հետ եղած բանակցութիւնները ա-
ռէն վերջացան, և ալժմ միայն մնում է, որ սուլ-
թանի իրադէտը հաստատուի: Բայց վախճնում
են որ Ռուսաստանի խառնելը կը քանդի ամ-
բողջ պայմանական պլանը: Ռուսաց զեպան,
դ. Նովիկով, հակադրեց Բ. Գրանց որ ինքը
ստանդով կընդդիմադրի, եթէ Բ. Գուռը Լեւո-
պոսկան պարտատէրերի հետ որ և է դաշնադիր
լապի, առանց նախապէս ապահովելու որ և իյն-
դիդիւնքների մասնաւոր աղբրինքնով Ռուսաս-
տանի պատերազմական ծախսեր: Սուլթանը
նախկին պետքը դրոյթեան մէջ է գտնիւմ:

— Ուսում լրագրիչներին թիրաքիայից գրում են, որ Մէկկայի մէջ վարակիչ սարսափելի անտը լից օր սաստկանում է. Ժողովուրդը և ուխտաւորները քաղաքից փախչում են դաշտերը, այդ նրանցից շատերը քաղաքից դուրս մի քաղաք թալկ անկուց յետոյ, արդէն ընկնում են Կուսած և նրանց դիակները անթաղ ան են մնում աշտերում: Մի լրագրի արխանտես թղթակիցը, որ օտար մի հիւպատոսութեան մէջ է ծառայում, բում է թէ Մէկկայի վիղղցները ծածկված են սառղ դիակներով: Մահմետական հոգեորակաւորիւնը ժամանակ չունի բոլոր ննկեցեալները աղբուր, այն աստիճան աշագիւն է մեռնողների լիւր:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պրուսիայի Էսսեն քաղաքում երդուեալների
դատարանը նոյեմբերի 7-ին քննում էր Շիֆ ա-
նուհով մէկի գործը, որը մեղադրվում էր երկու

տեսակ յանցանքների մէջ—բռնաբարբոթեան և
սպանութեան մէջ: Առաջին յանցանքի համար
Շիթ դատապարտուեցաւ տասն և հինգ տարով
տաժանակիր աշխատանքներ, իսկ երկրորդ յան-
ցանքի համար—մահաւան պատժի: Այժմ հարց
է ծաղիկ, թէ այդ դատավճիռներից որք պէտք
է առաջուց կատարվի:

Ներքերումս փարիզում Լիօնեան երկաթուղու
կայարանի վրա մէկ ճարպիկ գործութիւն կա-
տարվեցաւ։ Պարօն Ա., որ թմադազին քարերի
ն ուկեղէնի առևտուրի միջնորդ է, սահաբաւոր
վրա բարձրանալու ժամանակ, էպրիէպիտալի
հարուստ է տառնում, և ընկնում է երեսն վրա։
Արադկանց մէկ խումբ շտապում է օգնութիւն
հասցնել նրան և մի և նոյն ժամանակ լաւ հագն-
ված մէկ կին ամենքից առաջն է անցնում և
լաց Լինկով ընկնում է թշուառական վրա։
Այդ էնոյ լացը, որը իրան թշուառական Ա.-ի
կինն է անուանում, այնպիսի ազդեցութիւնն ու-
նենում բոլոր ներկայ եղողներին վրա, որ բոլոր-
րեքեանք սկսում են ցաւակցութիւնն նշաններ
յայտնել։ Որովհետեւ վտանքն է անցնում, այդ
պատճառով խեղճ կինը երկաթուղու վրա ծա-
ռայողներին խնդրում է իր մարդուն տեղափո-
խել դահլիճը, ուր աւելի յարմար կը լինի օգ-
նութիւն հասցնել, ի հարկէ, այդ խնդիրը
յաջապա կատարվում է. հիւանդին տանում են
մէկ առանձին սենեակ, ուր շուտով գլուխ է և
բժփշկը։ Այն ժամանակ, մեր բաղդախնդրահին,
ասում է «Evènement» լրագիրը, օգուտ քաղելով
այն բօպէից, երբ ներկայ եղողների ուշադրու-
թիւնը մը փոքր հեռանում է նրանից, ասում է,
որ ինքն կամենում է հանգստանալ այդ յուզմուն-
քից, և անցնում է հարևան սենեակը։ Հիւանդը
ուշէր է գլալի և երբ նրան շնորհաւորում են,
իէ նա այնքան անձնապէս ուժեղալին ունի, նա
յայտնում է թէ ինքը պահպմած է, նոյն բօ-
պէին մէկ վատ բան նախազգալով, նա քննում
է իր գրպանը և տեսնում է, որ ժամացոյցը,
պօրտֆօլը և պօրտմօնէն անհետացել են։ Իս-
կոյն գնում են այն սենեակը, ուր նրա սուտ
ամուսինը թաղնիկեցաւ, բայց այդ սենեակը մէկ
ուրիշ անգը էլ ունէր, ի հարկէ ճարպիկ բաղ-
դախնդրուհի թողն էլ չը կար Նրա նշանները
պօլիցիալականին հաղորդեցին, որ անյապաղ սրկ-
սեց որոնել նրան։

Լօնդօնի հասարակօվիւնը ուստիկ վրդով-
 ված է այն տարածված լուրերի առիթով, որ
 իբր թէ մայրաքաղաքի աղքատ ընտանիքները,
 ծախսերից պառօնելու համար, ծախում են ի-
 րանց զաւակներին լաբախագաններ Վրա, ո-
 րոնք սովորեցնելով նրանց իրանց արհեստը,
 թշուառ մանուկներին զանազան տանէմքներ
 են հնթարկում: Մէկ անգլիացի փաստաբան
 պատահմամբ տեսնելով այդ բազդախնդիրներից
 մէկի վարմունքը մանուկների հետ, տեղեկացաւ,
 որ տաս և չորս անգլիացի մանուկներ ծախված
 են եղել իրանց ծնողներից արաբացի լաբախա-
 ղացի վրա, որը իւրաքանչիւր երեխայի համար
 վճարում էր երեսունից մինչև յիսուն Փրանկ:
 Թշուառ զօհերի մէջ մինչև անգամ երեք տարե-
 նակն երեխաներ կային: Անգլիական հիւպատոսը
 իսկույն պահանջեց ազատել մանուկներն և իր
 հովանաւորութեան տակ ընդունեց նրանց:

* *

Փարիզում նորերումս քնաչրջկութեան (լուսնահարութեան) մէկ օտարօտի դիպուածք եղաւ, որ շատ տխուր հետեանքներ կարող էր ունենալ: Աէկ մեծատուն տիկին, կոմսուհի Ֆ., որ ամուսնուած է Փարիզի մօտ գտնված իր ամուսնուած, սկսեց նկատել, որ անդադար կորուստ են օրանից զանազան շորեր և թանգագլին քարեր: Կատկածել իր աղախնուն գողութեան մէջ նա էր կարող, որովհետեւ վաղուց համոզված էր նրա աղնութեան մէջ: Այդ ժամանակ գալիս է այդ երկու կոմսուհուն իր որդին, մի երիտասարդ ժֆիգէր, որը վճռեց գողին բռնել: Նրը որ բռնողը պառկեցին քնելու, նա մնաց նախասենեակում գողին հսկելու համար: Գիշերվայ մօտ ինից ժամին նա տեսաւ նախասենեակի միւս ծայրում մէկ շարժվող ստուեր և երկար չը մըտածելով, հրացան արձակեց նրա վրա: Բաղդաւորապէս զնտալը նպատակին չը հասաւ: Կայտնայեցաւ, որ նախասենեակում կանգնած էր ինքն ինքն կոմսուհին, որ քնաչրջկութեան հիւանդութեան ժամանակ տանում էր իր իրեղէններ և թագցնում էր մէկ ծածուկ տեղ, ուր և

